

Խնայեք ժամանակը: Գնացեք առցանց: www.DMV.ca.gov

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈՐԱԳԵՐԱԿԱՆ ԴՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Օրը 24 ժամ, շաբաթը 7 օր www.dmv.ca.gov կայքում առցանց կարող եք

- Նորացնել ձեր մեքենայի գրանցումը:
- Նորացնել ձեր վարորդական իրավունքը կամ նույնականացման քարտը:
- Հաշվել գրանցման վճարները:
- Ստուգել և թարմացնել տրանսպորտային միջոցների ապահովագրության կասեցման տեղեկատվությունը:
- Հանձնել վարորդական իրավունքի նմուշ թեստ:
- Պատվիրել հատուկ համարանիշներ:
- Ստանալ ձևաթղթեր, գրքուկներ և ձեռնարկներ:
- Գտնել ձեր DMV-ի հարցերի պատասխանները:
- Կատարել նշանակումներ (բացի առևտրային մեքենավարման քննությունից):

Ավտոմատ ծառայությունների համար օրը 24 ժամ, շաբաթը 7 օր զանգահարեք 1-800-777-0133:

- Կատարել նշանակումներ (բացի առևտրային մեքենավարման քննությունից):
 - Նորացնել ձեր մեքենայի գրանցումը կամ վարորդական իրավունքը: Նույնականացման համարի նորացման համար (Renewal ID Number (RIN)), տե՛ս նորացման վերաբերյալ ծանուցումը:
 - Ստանալ ձևեր և հրատարակություններ:
 - Լսել ընդհանուր տեղեկատվություն:
 - Ստուգել և թարմացնել տրանսպորտային միջոցների գրանցման ապահովագրության կասեցման տեղեկատվությունը:
- *Առևտրային մեքենավարման քննությանը գրանցվելու կամ տեխնիկական մասնագետի հետ խոսելու համար, զանգահարեք 1-800-777-0133 հեռախոսահամարով աշխատանքային ժամերի ընթացքում:*

Լսողության խնդիրներ ունեցողների սպասարկման համար՝
զանգահարել TTY 1-800-368-4327:

Գաղտնիություն

Ավտոտրանսպորտի դեպարտամենտը (Department of Motor Vehicles) ձգտում է պաշտպանել կորուստներից, չարաշահումներից, չթույլատրված մուտքից կամ իր հսկողության տակ գտնվող տեղեկատվության փոփոխությունից: Մեր գաղտնիության քաղաքականությունը գտնվում է www.dmv.ca.gov կայքի էջի ներքևի մասում՝ Գաղտնիության քաղաքականության (Privacy Policy) հղման մեջ:

SO_ARMENIAN (REV. 12/2014)



5

Պահանջներ
Կալիֆոռնիայի
վարորդական
իրավունքի համար

Արագ փաստեր



www.dmv.ca.gov

Ինչ է Կալիֆորնիայի վարորդական իրավունքը (California Driver License):

Կալիֆորնիայի վարորդական իրավունքը վկայականը (DL) քարտ է, որն անհատին թույլատրում է վարել Կալիֆորնիայի ճանապարհներին: DL-ը ներառում է ամբողջական անունը, ծննդյան ամսաթիվը, փոստային հասցեն, ստորագրությունը, լուսանկարը և ֆիզիկական նկարագրությունը: Այս քարտը պետք է լինի ձեր մոտ ցանկացած ժամանակ, երբ դուք մեքենա եք վարում: DL-ի համար դուք կարող եք դիմել Ավտոտրանսպորտի ղեկավարամենտ (DMV) տարածքային գրասենյակ: DL-ի բնօրինակի, նորացման և կրկնօրինակի համար առկա է դիմումի վճար: DL-ը սովորաբար վավեր է հինգ (5) տարի ժամկետով:

Որո՞նք են DL-ի դասակարգումները:

Առկա են DL-ի չորս (4) ոչ առևտրային դասակարգումներ՝

- Վարորդական իրավունք (հիմնական կարգ C)
 - Ստանդարտ մեքենա կամ բեռնատար՝ անձնական օգտագործման համար Կալիֆորնիայի ճանապարհներին վարելու համար:
- Սոռոցիկ (կարգ M1 կամ M2)
 - Երկու անիվանի (2) մեխանիկական տրանսպորտային միջոց:
- Ճանապարհորդական կցասայլ/հնգանիվ (ոչ առևտրային կարգ A)
 - Ավելի քան 15,000 ֆունտ քաշով (GVWR) կամ կցասայլ ավելի քան 10,000 ֆունտ քաշով GVWR, երբ տարահանումը փոխհատուցման համար չէ:
- Շարժական տուն (ոչ առևտրային կարգ B)
 - 40 ֆուտից ավել, բայց ոչ ավելի քան 45 ֆուտ՝ դրական եզրակացությամբ:

Ավելի մանրամասն տեղեկատվության համար, թե DL-ի, որ ոչ առևտրային կարգին դուք պետք է դիմեք, և դրա պահանջների համար տես *Կալիֆորնիայի վարորդի ձեռնարկը (California Driver Handbook)*:

Բացի DL-ի ոչ առևտրային (noncommercial DL) չորս (4) կարգերի, կան նաև երեք (3) առևտրային վարորդական իրավունքի վկայականի (Commercial Driver License

(CDL)) կարգեր: Առևտրային վարորդական իրավունքի վկայականի (CDL) համար դիմելու վերբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ *Կալիֆորնիայի առևտրային վարորդի ձեռնարկից (California Commercial Driver Handbook)*:

Ինչ է անհրաժեշտ դիմելու համար:

Ինքնության հաստատում

Երբ դուք դիմում եք Կալիֆորնիայի DL-ի բնօրինակի համար, պետք է ներկայացնեք ինքնությունը հաստատող ընդունելի փաստաթուղթ(եր)՝ այն ապացուցելու համար: Ընդունելի փաստաթուղթն այն է, որը տրված է վկայական տրամադրող մարմնի կողմից, օրինակ՝ վարչաշրջանի, նահանգի, դաշնության կամ օտարերկրյա գործակալության կողմից: Սրանք բնօրինակ կամ հավաստագրված փաստաթղթեր են, որոնք հաստատում են ծննդյան ամսաթիվը, ամբողջական ճշգրիտ անունը, ինքնությունը և/կամ օրինական ներկայությունը: DMV-ն կընդունի միայն բնօրինակ փաստաթուղթ կամ բնօրինակի հավաստագրված պատճեն՝ ինքնությունը հաստատելու համար: Ձեր փաստաթուղթը(երը) պետք է ներառի ձեր ամբողջական ճշգրիտ անունը: DMV-ի գրասենյակ ներկայացված փաստաթուղթը(երը) կվերադարձվի(են) ձեզ:

Պահանջվող փաստաթղթերի ամբողջական ցանկի համար, տե՛ս *Վարորդական իրավունքի վկայականի դիմումի համար պահանջվող փաստաթղթերի (Documents Required to Apply for a Driver License (FFDL 5A)) Արագ փաստեր (Fast Facts)* բրոշյուրը:

ՆՇՈՒՄ: Նախնական DL-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք DMV կայքը՝ **www.dmv.ca.gov**.

Ամբողջական ճշգրիտ անուն

Ձեր ամբողջական ճշգրիտ անունը, ձեր ներկայիս լրիվ անունն է, որը նշված է ձեր ինքնությունը հաստատող կամ անվանափոխության փաստաթղթի(երի) վրա: Եթե ձեր անձը հաստատող փաստաթղթի վրայի անունը տարբերվի դիմումում նշվածից, դուք պետք է ներկայացնեք լրացուցիչ փաստաթուղթ անվանափոխության մասին: Անվանափոխության փաստաթղթերը, որոնք հաստատում են ձեր ամբողջական ճշգրիտ անունը, ներառում են՝

- Որդեգրմանը փաստաթղթերը, որոնք պարունակում են իրավական անունը, որպես որդեգրման արդյունք:
- Անվանափոխության փաստաթուղթը, որը պարունակում է ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս իրավական անունները:
- Ամուսնության վկայական:
- Ամուսնալուծություն / կենցաղային գործընկերության փաստաթուղթ, որը դատարանի գործողության արդյունքում պարունակում է իրավական անուն:
- Կենցաղային գործընկերության ձևավորումը հաստատող վկայական, հայտարարություն կամ գրանցման փաստաթուղթ:

Բնակության վայրի հաստատում

DL-ի դիմելու համար համապատասխան AB 60-ին, պահանջվում է Կալիֆորնիայի բնակության ապացույց: Տարբեր փաստաթղթերի օրինակներ կարելի է գտնել *Վարորդական իրավունքի վկայականի դիմումի համար պահանջվող փաստաթղթերի (Documents Required to Apply for a Driver License (FFDL 5A)) Արագ փաստեր (Fast Facts)* բրոշյուրում:

Սոցիալական ապահովության համար (SSN)

Եթե դուք իրավասու եք կամ երբևէ ստացել եք SSN, դուք այն պետք է ներառեք ձեր դիմումում: Ձեր SSN կստուգվի սոցիալական ապահովության վարչության (Social Security Administration) կողմից, քանի դեռ դուք DMV-ի գրասենյակում եք: Լրացուցիչ տեղեկությունների համար տես *Սոցիալական ապահովության համար (Social Security Number (FFDL 8)) Արագ փաստեր (Fast Facts)* բրոշյուրը:

Ձևանմուշներ, վճարներ և թեստեր

DL-ի դիմելու համար, դուք պետք է լրացնեք Վարորդական իրավունքի վկայականի և նույնականացման քարտի դիմումի ձևը (Driver License and Identification Card Application (DL 44)): Այս ձևը կարող եք ձեռք բերել DMV-ի տարածքային գրասենյակից կամ զանգահարելով 1-800-777-0133 և այն կուղարկվի ձեզ: Դուք պետք է լրացնեք DL 44-ը և վճարեք արտոնագրման բոլոր վճարները: Արտոնագրման վճարների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ այցելելով DMV-ի կայք՝ **www.dmv.ca.gov**: Ձեզնից կպահանջվի տեսական, տեսողական և, եթե անհրաժեշտ է, մեքենավարման քննություններ հաճնել: